«Քայլ առ քայլ բարեգործական հիմադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ***Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը***

Մանկապարտեզ՝ ***Երևանի N 53 մսուր/մանկապարտեզ***

Դաստիարակ՝ ***Արմենուհի Խաչատրյան***

2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 4

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 4

ԳԼՈՒԽ 1. ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ... 5

1.1 ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ 5

1.2 ԻՆՉ Է ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 6

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 9

2.1 ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 9

2.2 ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ 10

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգի նկարագիրը պահելու և հայրենիքին տեր կանգնելու հիմքում ընկած է հայրենաճանաչությունը:Անհատն այնքանով է տեր իր երկրին ,որքանով ճանաչում և սիրում է:Հայրենաճանաչ հայը բոլորովին այլ վերաբերմունք ունի հայրենիքի հանդեպ,ով չի կարող անպիտան լինել սեփական երկրի հանդեպ: Ազգը ձևավորվում է իր ժողովրդով, ազգային արժեքներով, ուստի պետք է հենց վաղ մանկության տարիքից՝ սկսած ընտանիքից,այնուհետև մանկապարտեզից, լուրջ քայլեր ձեռնարկել այդ հարցում:

Ապրել ու մեռնել հայրենիքի համար. ահա խնդիրը, որ իբրև նպատակ ես ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից: **Խաչատուր Աբովյան**

Ինձ համար հայրենիքը սկսում է իմ ընտանիքից, իմ հարազատներից, իմ սիրելիներից, իմ մտերիմներից ու իմ շրջապատից: Հետո շարունակվում է իր պատմությամբ, իր շնչով, իր ոգով, մեր հինավուրց ճարտարապետությամբ և հող ու ջրով: Սա է իմ հայրենիքը ու ես չեմ կարող չսիրել այն:

Հետազոտական աշխատանքի համար ընտրվել է «Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը» թեման, որը շատ կարևոր և խնդրահարույց թեմա է բոլոր ժամանակներում:Արդի ժամանակներում առավել կարևորվում է 5-6 տարեկան սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը: Հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը նպաստում է երեխաների մեջ սերմանելու սեր դեպի հայրենիքը: Ես կարծում եմ, որ մեր ազգի նկարագիրը պահելու և հայրենիքին տեր կանգնելու հիմքում ընկած է հայրենաճանաչողությունը: Անհատն այնքանով է տեր կանգնում իր հայրենիքին, որքանով ճանաչում է այն և այդ ճանաչողությունն է իր հետ բերում կապվածություն, սեր և նվիրում դեպի հայրենիք:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Մեթոդների միջոցով բարձրացնել սաների հայրենաճանաչողության թեմայի կարևորության մակարդակը
2. Սաներին պատմել պատմամշակութային վայրերի մասին
3. Խնդրահարույց իրավիճակների ստեղծումը օգտագործել որպես սաների մոտիվացման և ստեղծագործական ու քննադատական մտածողության զարգացման միջոց:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ուսումնասիրել քննարկվող հարցի վերաբերյալ մասնագիտական գրականություն
2. Հիմնավորել հայրենաճանաչողության ուսուցման դաստիարակչական նշանակությունը
3. Դիտարկել հայրենաճանաչության դաստիարակման մեթոդական նյութերը

ԳԼՈՒԽ 1. ՍԱՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1 ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Գարեգին Նժդեն գրում էր, որ հայրենիքը ծնվեց մարդու առաջին մտածումի հետ՝ թե սուրբ է հայրենի հողը: Նա ստեղծվեց ան օրը, երբ մարդն առաջին անգամ՝ լինելով գիտակցորեն և ժպտադեմ, մեռավ հայրենի հողի համար: Հայրենիք չէ սոսկ երկիրը: Դա հայրենքի է դառնում այն հոգևոր արժեքներով, որոնցով նրան օժտում է ժողովուրդը: Հայաստան երկիրը հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբենը, Մամիկոնյանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործությունը:

Հայրենասիրությունն ինչ գեղեցիկ ճառագայթ մըն է վեհ ու անմեղ ճակատի վրա

Պետրոս Դուրյան

Հայրենասիրությունն այնպիսի բուռն կրակ մըն է, որ մարդ մոխիր կդարձնե:

Պետրոս Դուրյան

Հայրենասիրությունը նաև հայրենիքի համար զոհված հերոսների հիշատակը անմար պահելն է:

Հովհաննես Իսակով

Հայրենասիրությունն ամենախոր զգացմունքներից մեկն է՝ ամրացված դարերով ու հազարամյակներո:

Վլադիմիր Իլյիչ Լենին

Հայրենասիրությունը զգացմունքներից ազնվագույնն է:

Լիխաչև

Ազգի ռազմական հանճարը հայրենասիրությունն է, սերը դեպի հայրենիքը:

Գեորգ Լիխտենբերգ

Եթե պիտի մեռնենք, ապա թող այդ լինի սուրը մեր ձեռքին և կռվի դաշտում: Անարգ կյանքից ավելի՝ ազատ կյանքն է գովելի:

Մուրացան

Չկա ավելի խոր զգացում, քան հայրենասիրությունը:

Պարույր Սևակ

1.2 ԻՆՉ Է ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հասարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքականության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ:

Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշերի համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հոգևոր-բարոյական և սոցիալ-մշակութային բաղադրատարրեր: Հայրենասիրությունը հանդես է գալիս հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների, քաղաքացիականության և սոցիալական ակտիվության հետ միասին: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում: Սակայն առայսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով:

Հայրենասիրության ըմբռնմանն ուղղված մոտեցումների ողջ բազմազանությունը կարելի է պայմանականորեն դասել ուղղությունների:

Առաջին ուղղության մեջ կարելի է ներառել այն տեսակետներն ու դատողությունները, որոնք հայրենասիրությունը սահմանում են որպես հայրենիքի հանդեպ սիրո վեհ զգացմունք: Այս ուղղությունը բնորոշվում է բնության, հայրենի տան, ծննդավայրի, մանկության պատկերների հանդեպ սիրո վերացական դրսևորմամբ:

Երկրորդ ուղղությունը հիմնվում է հայրենասիրության՝ որպես բարձրագույն, առավել կարևոր ու էական զգացմունքներից մեկի ըմբռնման վրա: Սակայն այստեղ, հուզական կողմի հետ մեկտեղ, ներառվում է նաև գործնական տեսանկյուն. հայրենասիրական զգացմունքի ուժը չի սահմանափակվում հայրենիքի հանդեպ սոսկ սիրո խորությամբ ու վեհությամբ, այլ մղում է ակտիվ գործողությունների՝ հանուն սեփական հայրենիքի բարօրության:

Երրորդ ուղղությունը հայրենասիրությունը դիտարկում է որպես հասարակական երևույթ, որի բովանդակությունն ու բնույթը նշանակալի չափով պայմանավորվում են հասարակության, պետության պատմական զարգացման առանձնահատկություններով, իշխող ընտրախավի քաղաքականությամբ:

Չորրորդ ուղղությունը բնութագրվում է նրանով, որ հայրենասիրության օբյեկտ է դիտվում պետությունը: Այն անվանում են «պետական հայրենասիրություն»: Հայրենասիրության այդ տարատեսակի ի հայտ գալը պայմանավորված էր պատմական առանձնահատուկ պայմաններով: Այն առաջացավ՝ կապված պետության, վերջինիս ամրապնդման համար պետական իշխանության տարբեր ձևերի ստեղծման ջանքերի համախմբման անհրաժեշտության հետ:

Հինգերորդ ուղղությունը բացահայտում է հայրենասիրության էությունը հենց անձի հետ անբաժանելի կապի հետ միասին, որը նրա համար բարձրագույն արժեք է: Տվյալ ուղղությունը կոչվում է նաև անձնային հայրենասիրություն:

Վեցերորդ ուղղությունը որպես հայրենասիրուրյան սուբյեկտ շատ հաճախ դիտարկում է անձին: Հայրենասիրությունն ըմբռնվում է որպես անձի հոգևոր զարգացման, ինքնարտահայտման կարևորագույն փուլ: Դա հայրենասիրության բարձր մակարդակ է, քանի որ անձի հոգևոր ինքնադրսևորումը ենթադրում է կարևորագույն կողմերի և որակների մի ամբողջության դրսևորում, որոնք բնութագրվում են իրենց ձևակերպվածության լիարժեքությամբ, ամբողջությամբ, կատարելությամբ: Անձի այդ որակները ենթադրում են կրոնական բովանդակություն, ինչը հնարավորություն է տալիս այդ ուղղությունն անվանել հոգևոր-կրոնական: Հոգևոր-կրոնական հայրենասիրությունն ունի ամենամեծ և ամենահարուստ ավանդույթը, խոր և հզոր արմատներ:

Հայրենասիրությունը, եթե նկատի ունենանք ծագումը, առաջանում և զարգանում է որպես զգացմունք, որն ավելի ու ավելի է սոցիալականացվում և վեր հառնում հոգևոր-բարոյական հարստացման միջոցով: Հայրենասիրական զգացմունքի ըմբռնումը անբաժանելիորեն կապված է նրա գործունեության հետ, ինչն առավել կոնկրետ պլանով դրսևորվում է ակտիվ սոցիալական գործունեությամբ, գործողություններով և արարքներով, որ կատարվում են մարդու կողմից՝ ի բարօրություն հայրենիքի:

Հայրենասիրությունը՝ բնույթով որպես խորապես սոցիալական երևույթ, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր է, հանդես է գալիս որպես մարդու կենսունակության, իսկ երբեմն էլ նրա կենսակայունության բնութագրիչ:

Հայրենասիրության բնորոշ դրսևորումներից մեկը հզոր պետականության երազանքն է: Այն արտացոլում է մեր հասարակության պատմական զարգացման յուրահատկությունը: Այդպիսի հայրենասիրության կարևոր գործոն է պետությունը: Ներկայումս հայ հասարակության զարգացման, ժամանակակից պետության ստեղծման համար կարևորագույն պայման է համարվում հայրերասիրության վերածնունդը:

Իսկական հայրենասիրությունը նրա հոգևոր բնույթի մեջ է: Հայրենասիրությունը կարևորագույն գործոն է սոցիալական խմբում անձի առավել լիարժեք դրսևորման համար: Այն ենթադրում է հայրենիքին անշահախնդիր, անմնացորդ ծառայություն:

Ելնելով այս ամենից՝ կարելի է ընդհանրացնել հայրենասիրության առավել էական կողմերը և սահմանել այն:

Հայրենասիրությունը անձի առավել նշանակալից բարոյական արժեքներից է, անհատի կարևորագույն հոգևոր ձեռքբերումը, որը բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և արտահայտվում է ինքնադրսևորման ակտիվ գործունեությամբ՝ ի բարօրություն հայրենիքի:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

2.1 ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախադպրոցական տարիքը երեխայի անհատականության զարգացման շրջանն է: Մտածելով հայրենասիրական զգացմունքների ծագման մասին նրանք միշտ դիմում են մանկության տպավորություններին:

Հենց այս շրջան նպաստավոր է հայրենասիրական զգացմունքների դաստիարակման համար: Հայրենասիրության զգացումը պետք է լինի գիտակցված ու ուժեղ: Հետաքրքրություն առաջացնել երեխայի մոտ հայրենի հողի, հայրենիքի հանդեպ սիրո զգացողության ձևավորում՝ հայրենի մշակույթին և ավանդույթներին ծանոթանալու համար:

Ժամանակակից հանրակրթարանի խնդիրներից է երեխաներին ծանոթացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությանը, նպաստել երեխաների հայրենասիրական դաստիարակությանը: Այն տեղի է ունենում նաև երաժշտության ուսուցման գործընթացում հայրենասիրական կատարողականությունը ուսուցանելիս: Այս հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորվում է նրանով, որ հենց հայրենիքի համար պայքարին, հայրենիքին, հայրենիքի պաշտպան հերոսներին, զինվորներին ու բանակին նվիրված ազգային ազատագրական, ժողովրդական ռազմի ու զինվորի երգերն են ազդում կրթվող սերունդների հայրենասիրական դաստիարակության գործընթացի արդյունավետության վրա, նրանց տալիս բարոյական բարձր ուղենիշներ և նպաստում ազգային արժեհամակարգի ձևավորմանը: Հայրենասիրական երգերի, ազգային-ազատագրական ու ժողովրդական երգերի ուսուցման նշանակությունը և կարևորությունը, վերջիններս օժտված են երեխայի արժեհամակարգի ձևավորման և նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակելու հսկայական ներուժով:

2.2 ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Այսօր, առավել քան երբևէ, արդիական են երիտասարդ քաղաքացիների շրջանում ազգի պատմական հիշողության վերակենդանացման, հայրենիքի հանդեպ արժեքային վերաբերմունքի և սիրո ձևավորման խնդիրները: Հայրենասիրական դաստիարակության կազմակերպումը ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչ է, որի օժանդակությունն ու գործիքը մեթոդական աշխատանքն է: Մանկապարտեզում ես աջակցում և ուղղորդում եմ երեխայի հետաքրքրությունը այլ ազգի մարդկանց նկատմամբ ևս: Երեխաներին պատմում եմ,թե որտեղ է ապրում յուրաքանչյուր ժողովուրդ՝ տարածքային առումով, բնության յուրահատկության և բնակլիմայական պայմանների մասին, որոնցից կախված է նրա ապրելակերպը, աշխատանքի բնույթը և այլն:

Ներկայումս այս աշխատանքը արդիական է և հատկապես դժվար, պահանջում է մեծ նրբանկատություն և համբերություն. Իմ պատկերացմամբ այժմյան երիտասարդ ընտանիքներում հայրենասիրության դաստիարակության հարցերը կարևոր չեն համարվում և հաճախ միայն տարակուսանք են առաջացնում: Այդ պատճառով իմ աշխատանքի հիմնական գաղափարը ծնողների ջանքերը համախմբելն է, որպեսզի երեխաների մեջ ձևավորվի պատկերացումներ տան, ծնողների, այն վայրի մասին, որտեղ նա ծնվել է, այն ամենի մասին, ինչն իրեն շրջապատում է և այն, ինչը կոչվում է փոքր հայրենիք: Սխալ է կարծել, թե սեր սերմանելով ընտանիքի հանդեպ՝ մենք արդեն սեր ենք սերմանում հայրենիքի հանդեպ: Ցավոք, լինում են դեպքեր, երբ սեփական տան հանդեպ նվիրվածությունը համակցված է երկրի ճակատագրի նկատմամբ անտարբերության, երբեմն նույնիսկ դավաճանության հետ:Ուստի կարևոր է, որ երեխաները հնարավորինս շուտ տեսնեն իրենց ընտանիքի «քաղաքացիական դեմքը»,ծանոթանալ,թե ինչու են իրենց պապերն ու տատիկները մեդալներ ստացել, ճանաչել հայտնի նախնիների և այլն: Ցանկացած մարզ, քաղաք, նույնիսկ փոքրիկ գյուղ յուրահատուկ է:

Յուրաքանչյուր վայր ունի իր բնույթը, ավանդույթներն ու ապրելակերպը: Հայրենասիրական դաստիարակության մեջ մեծերի, հատկապես մտերիմ մարդկանց օրինակը մեծ նշանակություն ունի: Շատ կարևոր է երեխային հասցնել այն ըմբռնմանը, որ ամեն ինչից առավել սերն է դեպի հայրենիքը,որ մեր նախնիները դժվար ճանապարհով են կերտել մեր երկիրը,ինչը պետք է սրբորեն պահպանել: Երեխաները պետք է ճանաչեն մեր հերոսներին ,ովքեր իրենց կյանքը տվել են հանուն մարդկանց երջանկության և խաղաղության ու նրանց անունները հավերժացել են քաղաքների, փողոցների, հրապարակների անուններով, նրանց պատվին կանգնեցվել են հուշարձաններ:

Նախադպրոցական տարիքի երեխային բնորոշ են կարճաժամկետ հետաքրքրությունները ,անկայուն ուշադրությունը,հոգնածությունը:Երեխաների ուշադրությունը զարգացնելու նպատակով անհրաժեշտ է պահպանել երկարաժամկետ հետքրքրությունև պարապմունքները համատեղել մեկ թեմայում մայրենի լեզվով և բնությանը,երաժշտությանը,տեսողական գործունեությանը ծանոթանալուն: Երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով անհրաժեշտ է կիրառել խաղային տեխնիկայի, ինչը կարևոր է ինչպես երեխաների ճանաչողական ակտիվությունը բարձրացնելու, այնպես էլ պարապմունքների համար հուզական մթնոլորտ ստեղծելու համար: Քանի որ նախադպրոցական տարիքի երեխաներին բնորոշ է տեսողական փոխաբերական մտածողությունը,առօրյա կյանքին, ավանդույթներին, առանձին պատմական պահերին ծանոթացնելու նպատակով անհրաժեշտ է օգտագործել ոչ միայն գեղարվեստական գրականություն, նկարազարդումներ և այլն, այլ նաև «կենդանի» տեսողական առարկաներ և նյութեր (ազգային տարազներ, հնաոճ կահույք, սպասք, գործիքներ և այլն): «Առօրյա կյանքը» չափազանց արդյունավետ է երեխաներին հեքիաթներին, ժողովրդական արհեստներին, կենցաղային հնաոճ իրերին ծանոթացնելու համար,այդ պատճառով ցանկալի է այցելություններ դեպի թանգարաններ, ինչպես նաև մանկապարտեզում հատուկ հարմարությունների կազմակերպում,որտեղ երեխայի համար առաջին հնարավորությունն է բացվում ներթափանցել իր հայրենի հողի պատմության մեջ:

Երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակության պարագայում շատ կարևոր է ծնողների հետ սերտ հարաբերությունները: Սեփական ընտանիքի պատմությանը շոշափելը երեխայի մոտ ուժեղ հույզեր է առաջացնում և ստիպում է կարեկցել, ուշադիր լինել անցյալի հիշողության, պատմական արմատների նկատմամբ:Այստեղ ուզում եմ մեջբերել Յու.Ամիրջանյանի,Ա.Սահակյանի մանկավարժություն ուսումնական ձեռնարկում նշվում է հետևյալը .<< Ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքներ:

Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության ,մշակույթի,հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից, հասարակության բոլոր անդամների մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի, իրենց գյուղի, ավանի,քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն,փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ>>: Այս հարցում ծնողների հետ փոխգործակցությունը նպաստում է ավանդույթների նկատմամբ զգույշ վերաբերմունքին, ուղղահայաց ընտանեկան կապերի պահպանմանը:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ

Թեմա- «Հայաստանն իմ տունն է»

Տեսակը- Պատմում նկարների միջոցով

Նպատակները- Հստակեցնել և ամրապնդել երեխաների գիտելիքները՝ ՀՀ-ի վերաբերյալ:Ծանոթացնել ՀՀ դրոշին, զինանշանին, օրհներգին, տեսարժան վայրերին, հուշարձաններին(նկարների միջոցով):

Խնդիրները- Արթնացնել հայրենասիրական զգացմունքներ ,ինչպես նաև գիտակցական վերաբերմունք ձևավորել հայրենիքի զգացողությունն ամուր պահելու առումով: Երեխայի գիտակցությանը հասցնել, որ հայրենիքը մեկն է, ուստի չի կարելի լքել : Զարգացնել կապակցված խոսք կառուցելու հմտություններ, ամրապնդել հիշողությունը: Զարգացնել խոսքային և ճանաչողական կարողությունները:

Անհրաժեշտ պարագաներ- ՀՀ զինանշան, Երևանի մասին երգեր պարունակող ձայնասկավառակներ, խճանկար՝ Երևանի տեսարժան վայրերը:

Խթանում- Երևանի մասին երաժշտության հնչյունների ներքո սկսել պարապմունքը:

Դաստիարակ-Ի՞նչ եք հասկանում հայրենիք ասելով:

Երեխաներ-Հայրենիքը որտեղ մենք ապրում ենք, որտեղ ծնվել և մեծանում ենք, այստեղ ապրում են մեր հարազատները: Հայրենիքը դա մեր մանկապարտեզն է, մեր ընկերներն են: Հայրենիքը դա մեր մայրաքաղաք Երևանն է: Հայրենիքը հայն է ու հայի ոգին:

Երևանը գովերգել են շատ ու շատ բանաստեղծներ, երգահաններ:

Իմ վարդագույն գեղեցկուհի,
Կանաչապատ ամրոց, այգի,
Քաղաք իմ նոր, հնամենի.

Արևոտ իմ օթևան,

Քաղաքամայր Երևան:(Հասմիկ Միտոյան)

Իմաստի ընկալում- Հայրենիքի խորհրդանիշներն են Հայաստանի պետական դրոշը, զինանշանը, օրհներգը: Դատիարակը ցուցադրում է զինանշանը, պատմում որ արծիվը իմաստուն ժողովրդի խորհուրդն է, առյուծը՝ ժողովրդի ուժը: Եվ պատմում է 4 թագավորությունների մասին, Արարատ լեռան և Նոյյան տապանի մասին: Ցուցադրելով դրոշը դաստիարակը խոսում է դրոշ գույների խորհուրդների մասին:

Փոքրիկ բանաստեղծական դադար-

Իմ Հայաստան, իմ Հայրենիք,
Երկնքի չափ սիրում եմ քեզ,
Թեև փոքրիկ, շատ եմ փոքրիկ,
Քո մասին շատ բան գիտեմ ես:

Դաստիարակը երեխաներին նկարներ բաժանելով կազմակերպում է խաղ և Սառաջադրում 3-4 նախադասությամբ պատմել նկարի մասին: Խմբի յուրաքանչյու երեխա մասնակցում է խաղին: Դաստիարակը լրացումներով շարունակում է երեխաների խոսքը:

Օրվա 2-րդ կեսին երեխաները նկարելու միջոցով կվերարտադրեն իրենց ստեղծած պատմությունը և լավագույն խումբը կարժանանա մրցանակի՝ Գիրք Հայաստանի մասին:

Վերջում կհստակեցվի երեխաների ստացած գիտելիքները թեմայի վերաբերյալ, հարցերի միջոցով ևս մեկ անգամ տեղի կունենա ամրապնդում: Դասի ավարտին սաները լցված կլինեն հայրենասերի ավելի մեծ ոգով: Հայրենասիրությունը ծնվում է հենց այն նույն պահին, երբ ծնվում է մարդ-արարածը:

ՏՆՕՐԵՆԻ ԽՈՍՔ- Սաների հայրենաճանաչողության ամրապնդման գործում մեծ դեր ունի ուսումնադաստիարակչական ամբողջ գործընթացը, ինչի առնչությամբ լուրջ աշխատանքներ է իրականացվում դաստիարակի կողմից: Դաստիարակի խոսքը գրագետ էր և հասկանալի, խումբը կառավարում էր հմտորեն և հոգացությամբ:Առկա էին անհրաժեշտ ուսումնական և ուսումնաօժանդակ նյութերը, դիդակտիկ պարագաներ և համապատասխան միջավայր էր ապահովված: Ուսուցանվող նյութը

համապատասխանում էր ծրագրային պահանջներին և նպաստում էր երեխաների ինքնուրույն աշխատելու և արտահայտվելու կարողությունների ձևավորմանը: Պարապմունքի ընթացքում ապահովեց պարապմունքի փուլերի տրամաբանական կապը: Պարապմունքը հնարավորություն տվեց երեխաների մեջ ձևավորել հստակ պատկերացումներ հայրենասիրության վերաբերյալ: Այս գիտելիքները նրանց հնարավորություն կտան գնահատել, սիրել և պաշտպանել հայրենիքը մինչև կյանքի վերջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքի թեման, անկասկած շատ մեծ նշանակություն ունի երեխայի համար: Հայրենաճանաչողության կարևորության մասին կարելի է խոսել երկար: Ուսումնասիրելով հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական պատմությունը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունները, ձեռքբերումները, ստեղծած արժեքների և համամարդկային նվաճումների, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարությունների ու կորուստների մասին երեխաների հիշողության մեջ ամրապնդվում է հայրենասիրությունը: Ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթական բոլոր ոլորտներում պետք է դրվի հայրենաճանաչողության կարևորության հարցը: Պետք է սիրել հայրենիքը, հնարավոր չէ այն սիրել, հայրենիքը սիրելու եւ ճշմարիտ նկարագրով քաղաքացի լինելու միակ պայմանը հայրենիքը ճանաչելն է: Շատ կարեւոր է, որ մանկապարտեզներում ու դպրոցներում հայրենաճանաչության դասեր անցկացվեն, որի արդյունքում մենք կունենանք հայրենասերներ: Այսօր հանրակրթական դպրոցներում և նույնիսկ համալսարաններում հայրենաճանաչության վերաբերյալ դասընթացները շատ ցածր հիմքերի վրա են: Այս ամենը վտանգավոր հետեւանքներ կունենա, եթե ամեն ինչ այս կերպ շարունակվի:

Հայրենաճանաչության բացակայությունը մեզ շատ մեծ արհավիրքների կարող է հանգեցնել: Փոքր է մեր հայրենիքը ու փոքր ազգ ենք,բայց մեծ պատմություն ունենք,բարձր մարդկային արժեքներ:Թեև քիչ ենք,բայց աշխարհի ամեն մի անկյունում ունենք շատ հայտնի հայեր,ովքեր իրենց գործնեությամբ միշտ բարձր են պահում հայ ազգի պատիվը:Քիչ ենք,բայց ամեն մի դժվար պահին միասնական,մի մարդու նման ենք դառնում ու ավելի ուժեղ,քան ցանկացած երկիր:

Քիչ ենք,այո,բայց դարերի ընթացքում կարողացել ենք պահպանել մեր ազգը,կրոնը,մեր գիր ու գրականությունը,մեր մշակույթը ու թույլ չենք տվել ոչ ոքի խլել մեզանից այդ հարստությունը,երբեք չենք կորցրել հույսն ու հավատը,մեր մարդկային արժեքները,որոնք սերնդից սերունդ փոխանցվել է հայ ազգի զավակներին,մեր անվախ սերնդին,որոնց երակնեով հայի թունդ արյունն է հոսում՝ փոխանցված հայ քաջերից,որոնք կյանքի գնով պաշտպանել են սուրբ հայրենիքի սահմանները ու ոչնչացրել յուրաքանչյուրին,ով համարձակվել է ոտք կոխել հայրենիքի սահմաններից ներս,իր ձեռքից խլելու մեր մարտիկների անգին արյունով գնված տարածքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Belaya K. Yu. Մեթոդական աշխատանք նախադպրոցական ուսումնական հաստատությունում. M.: TC Sphere, 2008:

2. Volobueva L. M. Նախադպրոցական ուսումնական հաստատության ավագ ուսուցչի աշխատանքը ուսուցիչների հետ: M.: TC Sphere, 2008:

3. Davydova O. I., Mayer A. A., Bogoslavets L. G. Ինտերակտիվ մեթոդներ նախադպրոցական ուսումնական հաստատություններում մանկավարժական խորհուրդների կազմակերպման մեջ: Հրատարակչություն «Մանկություն - Մամուլ», 2009 թ.

4. Elzhova N. V. E 50 Թեմատիկ ուսուցիչների խորհուրդներ նախադպրոցական ուսումնական հաստատությունում. նախապատրաստում և վարում / N. V. Elzhova.- Rostov n / D: Phoenix, 2012. - 216

5. Լուկինա Լ. Ի. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական անձնակազմի հետ աշխատանքի կազմակերպչական ասպեկտները. M.: TC Sphere, 2

6. Մանկավարժական խորհուրդներ նախադպրոցական ուսումնական հաստատություններում / Կազմել է Կամալովա Ն.Ռ., Բլագուշկո Լ.Ն., Ստրելնիկովա Լ.Ն., Պետրովա Ա.Վ., Բաբչինսկայա Վ.Յու., Մուրչենկո Ն.Ա. - Վոլգոգրադ: Հրատարակչություն «Ուսուցիչ», 2016 թ.